*Լրամշակված նախագիծ*
*երկրորդ ընթերցում*

**Կ-1202[2]-02.12.2025-ՊԻ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերում «որոնք ենթակա չեն հրապարակման» բառերից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 26.1-ին հոդվածում՝

1) 7.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալների համադրության արդյունքում արձանագրված խնդիրների և անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը թեկնածուից պահանջում և ստանում է պարզաբանումներ:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.2-րդ և 7.3-րդ մասերով.

«7.2. Թեկնածուից ստացած պարզաբանումների վերլուծության և համադրման արդյունքում կազմվում է անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ եզրակացության նախագիծը: Բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագիծն ուղարկվում է անձին (թեկնածուին) բարեվարքության հարցաթերթիկում նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Նախագծում Հանձնաժողովի անդամների անհատական քվեարկության նախնական արդյունքներն ապանձնավորվում են: Անձը (թեկնածուն) եռօրյա ժամկետում կարող

է բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի վերաբերյալ ներկայացնել առարկություններ և լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

7.3. Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի և անձի (թեկնածուի) կողմից ներկայացված առարկությունների համադրության արդյունքում կազմում է անձի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը:»:

3) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը հրապարակման ենթակա չէ և չի տրամադրվում այլ անձանց՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների եզրափակիչ մասի: Անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված դեպքերում:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12.1-ին մասով.

«12.1. Հանձնաժողովը անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը միաժամանակ ներկայացնում է անձին (թեկնածուին) և նրան նշանակելու կամ ընտրելու իրավասություն ունեցող մարմին: Անձը (թեկնածուն) կարող է նշանակող կամ ընտրող մարմնին և Հանձնաժողովին ներկայացնել նաև բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության վերաբերյալ իր առարկությունները:»:

**Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների հիման վրա իրականացվող բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների վրա:

Կ-1202[2]-02.12.2025-ՊԻ-011/1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերում «որոնք ենթակա չեն հրապարակման» բառերից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 26.1-ին հոդվածում՝

4) 7.1–ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված տվյալների համադրության արդյունքում արձանագրված խնդիրների և անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը թեկնածուից պահանջում և ստանում է պարզաբանումներ:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.2-րդ և 7.3-րդ մասերով.

«7.2. Թեկնածուից ստացած պարզաբանումների վերլուծության և համադրման արդյունքում կազմվում է անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ եզրակացության նախագիծը: Բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագիծն ուղարկվում է անձին (թեկնածուին) բարեվարքության հարցաթերթիկում նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Նախագծում Հանձնաժողովի անդամների անհատական քվեարկության նախնական արդյունքներն ապանձնավորվում են: Անձը (թեկնածուն) եռօրյա ժամկետում կարող է բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի վերաբերյալ ներկայացնել առարկություններ և լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

7.3. Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի և անձի (թեկնածուի) կողմից ներկայացված առարկությունների համադրության արդյունքում կազմում է անձի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը:»:

6) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը հրապարակման ենթակա չէ և չի տրամադրվում այլ անձանց՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների եզրափակիչ մասի: Անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված դեպքերում:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12.1-ին մասով.

«12.1. Հանձնաժողովը անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը միաժամանակ ներկայացնում է անձին (թեկնածուին) և նրան նշանակելու կամ ընտրելու իրավասություն ունեցող մարմին: Անձը (թեկնածուն) կարող է նշանակող կամ ընտրող մարմնին և Հանձնաժողովին ներկայացնել նաև բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության վերաբերյալ իր առարկությունները:»:

**Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների հիման վրա իրականացվող բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների վրա:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1202-02.12.2025-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 2-րդ հոդված,**<br><br>**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական** | Նախագծերի անցումային դրույթներում առաջարկվում է սահմանել հետևյալ բովանդակությամբ կարգավորումներ. «Սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների հիման վրա իրականացվող բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների վրա:»: Վերոգրյալ կարգավորման ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախագծերով նախատեսվում է ոչ միայն բարեվարքության խորհրդատվական | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **օրենքի նախագծի 5-րդ հոդված, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված,**<br><br>**«Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված,**<br><br>«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված,<br><br>«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված: | եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակման կառուցակարգի ներդրում, այլ նաև՝ բարեվարքության ուսումնասիրության գործող մեխանիզմների վերանայում: Նման պայմաններում, կարևոր է սահմանել, որ առաջարկվող կարգավորումները կտարածվեն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա և չեն տարածվի արդեն իսկ իրականացվող բարեվարքության ուսումնասիրության գործընթացի վրա՝ ապահովելու արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող բարեվարքության ուսումնասիրությունների սահուն իրականացումը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ՀՀ կառավարություն | **«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 1-ին հոդված** | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, քանի որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքին այլևս հղում չի կատարվում: | **Ընդունվել է** | **Ընդունվել է** |